ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21-Հ1

07.02.2024թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «03» 2024թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նունե Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 07.02.2024թ. կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ թիվ 2323-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել պայմանագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,
Կառավարական տուն 2,	գ. Դավթաշեն, 9 փ., տուն 5
ՀՀ ֆինանսների նախարարության	Հեռ.՝ (+374) 94-495-711
գործառնական վարչություն	Էլ. Փոստ՝ proekt800@inbox.ru
Հ/Հ 900011047082	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Աջափնյակ մ/ճ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 1150016869699679
	ՀՎՀՀ 06954714
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
---------- **Հ. Հակոբյան**	---------- **Ն. Հովհաննիսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«12» «03» 2024թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ ՀՀ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611200/503	**Մշակութային օբյեկտների հիմնանորոգում** (Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ)	-	-	5247485	10494970	10494970	10494970	20989939	20989939	20989939	20989939	20989939	20989939	**20989939**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Ն. Հովհաննիսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

AraratBank

№ 1248/08
«07» 03 2024թ

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/21» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ:

2. Երաշխիքով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,283,055 (չորս միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար հիսունհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի «900008000664» հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/21 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 2024թ.-ի հոկտեմբերի 10-ը: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ arsen.soghomonyan@escs.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/21» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ **Մ.Անանյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK CJSC • 02500518

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
0002, ՀՀ, ք Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք

AraratBank

№ 1247/08
«07» 03 2024թ

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 2,855,370 (երկու միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի «900008000664» հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրիցնիպալի միջև կնքվելիք N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21ե պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 2025թ.-ի հոկտեմբերի 10-ը: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ arsen.soghomonyan@escs.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-24/21» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարվա փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ **Մ.Անանյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ · ARARATBANK OJSC · 02500518 · ՀԱՅԱՍՏԱՆ

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
0002, ՀՀ, ք Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք